

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2026 թ. փետրվարի 18-ին կայացած թիվ 8 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2026 թ. փետրվարի 18-ին կայացած թիվ 8 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ղեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Գիտական խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 27-ը:

Նախագահը ներկաներին տեղեկացրեց կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ Ի.Վ. Շահազիզյանի բացակայության և տվյալ նիստի համար գիտական խորհրդի քարտուղար ընտրելու անհրաժեշտության մասին: Կարեն Ղազարյանի կողմից որպես թիվ 8 նիստի գիտքարտուղար առաջարկվեց կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Մարինե Փարսադանյանի թեկնածությունը: Գիտական խորհրդի անդամների համաձայնությամբ Ս. Փարսադանյանի թեկնածությունը դրվեց բաց քվեարկության և անցավ միաձայն:

Հաջորդիվ Կ. Ղազարյանի կողմից ներկայացվեց նիստի օրակարգը, որն դրվեց քվեարկության և հաստատվեց միաձայն:

Օրակարգ.

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության, էկոլոգիայի և բնության պահպանության ու կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնների վարիչների ընտրության հարցը:
2. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր-2025» մրցույթի շրջանակներում իրականացվող ծրագրերի հաշվետվությունների վերաբերյալ հարցը:
3. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Նպատակային ծրագրեր-2027» (Target 2027) մրցույթին կենսաբանության ֆակուլտետի կողմից ներկայացված հայտերի երաշխավորության հարցը:
4. ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի ֆարմաթեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի ավագ լաբորանտ, Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀ կենտրոնի բժշկակենսաբանական սքրինինգի խմբի ավագ լաբորանտ, հայցորդ Մելանյա Սամվելի Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
5. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի նախկին հայցորդ Արմինե Երվանդի Պարոնիկյանի գիտական ղեկավարի հաստատման հարցը:
6. ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների ներկայացման հարցը:
7. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ՝** ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ.գ.դ., պրոֆեսոր Աննա Արշակի Փոլադյանի, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ. գ. թ., ասիստենտ Սյուզաննա Սայաթի Եսոյանի և ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ.գ.թ., ասիստենտ Անժելա Աշոտի Սարգսյանի ընտրության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, մրցութային հանձնաժողովի նախագահ, կ.գ.թ. Լ.Ս. Գաբրիելյանը: Կ. Ա. Ղազարյանը հայտնեց, որ ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի գործող վարիչ, պրոֆեսոր, կ.գ.դ. Աննա Արշակի Փոլադյանը; էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին՝ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ասիստենտ, կ.գ.թ. Սյուզաննա Սայաթի Եսոյանը; ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին՝ ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ. Անժելա Աշոտի Սարգսյանը:

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահը ծանոթացրեց գիտական խորհրդի անդամներին թեկնածուների անձնական գործերին: Լ.Ս. Գաբրիելյանը ներկայացրեց պրոֆեսոր, կ.գ.դ. Աննա Արշակի Փոլադյանի, ասիստենտներ կ.գ.թ. Սյուզաննա Սայաթի Եսոյանի և Անժելա Աշոտի Սարգսյանի գիտամանկավարժական ակտիվ գործունեությունը, համապատասխան ամբիոնների կարծիքները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի բաց քվեարկության արդյունքները, ԵՊՀ որակավորման մանդատային հանձնաժողովի եզրակացությունները մրցույթի պայմաններին համապատասխանելու վերաբերյալ, ինչպես նաև կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի եզրակացությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ.գ.դ., պրոֆեսոր Աննա Արշակի Փոլադյանի, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ.գ.թ., ասիստենտ Սյուզաննա Սայաթի Եսոյանի և ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ.գ.թ., ասիստենտ Անժելա Աշոտի Սարգսյանի թեկնածությունները դնել փակ գաղտնի քվեարկության:

Ելույթներից հետո անցկացվեց բաց քվեարկություն, որի ժամանակ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Անտոնյան Արա Պետիկի (նախագահ)
2. Ղազարյան Աստղիկ Սամվելի
3. Թարգյան Նաթելա Արթուրի

ԼՍԵՑԻՆ. Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա.

Պ. Անտոնյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին:

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի 27 անդամներ:

Բաժանվել է 27 քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է 27 քվեաթերթիկ:

Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ.գ.դ., պրոֆեսոր Աննա Արշակի Փոլադյանի փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են.

Կողմ՝ 27,

Դեմ՝ 0,

Անվավեր՝ 0:

Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ.գ.թ., ասիստենտ Սյուզաննա Սայաթի Եսոյանի փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են.

Կողմ՝ 27,

Դեմ՝ 0,

Անվավեր՝ 0:

Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչի 1.0 դրույքաչափով թափուր պաշտոնում կ.գ.թ., ասիստենտ Անժելա Աշոտի Սարգսյանի փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են.

Կողմ՝ 27,

Դեմ՝ 0,

Անվավեր՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքներով կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աննա Արշակի Փոլադյանին համարել ընտրված ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

Փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքներով կենս.գիտ.թեկնածու, ասիստենտ Սյուզաննա Սայաթի Եսոյանին համարել ընտրված ԵՊՀ էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի պաշտոնում:

Փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքներով կենս.գիտ.թեկնածու, ասիստենտ Անժելա Աշոտի Սարգսյանին համարել ընտրված ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր-2025» մրցույթի շրջանակներում իրականացվող ծրագրերի հաշվետվությունների վերաբերյալ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր-2025» մրցույթի շրջանակում իրականացվող ծրագրերի ղեկավարները: Ստորև ներկայացված են ղեկավարների կողմից ներկայացված համառոտ հաշվետվությունները:

1. 25RG-1F158 ծածկագրով թեմայի ղեկավար Ա. Անտոնյանը ներկայացրեց կատարված աշխատանքների ընթացքը, տպագրված և տպագրության հանձնած գիտական հոդվածները, ձեռք բերված նյութերն ու պարագաները: Նա, մասնավորապես նշեց, որ հաշվետու տարում ուսումնասիրվել է 51.8 ԳՀց հաճախությամբ միլիմետրային տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների ազդեցությունը ԴՆԹ-սպեցիֆիկ լիզանդ-ինտերկալատորների՝ ակրիդինային նարնջագույնի (AO) և մեթիլեն կապույտի (MB) ցլի շիճուկային ալբումինի (ՅՇԱ, BSA) հետ փոխազդեցության վրա: Համեմատվել են ճառագայթված և չճառագայթված նմուշների մի շարք թերմոդինամիկ պարամետրեր: Ստացված արդյունքները հնարավորություն են տալիս բացահայտել միլիմետրային տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների ազդեցության առանձնահատկությունները նշված լիզանդների՝ ՅՇԱ-ի հետ փոխազդեցության գործընթացում, ինչպես նաև ենթադրել դրանց կապման հնարավոր տեղերն ու մեխանիզմները: Ուսումնասիրություններն իրականացվել են կլանման, դիֆերենցիալ և ֆլուորեսցենտային սպեկտրոսկոպիայի մեթոդներով: Դրամաշնորհի շրջանակներում տպագրվել է «Comparative study of spectral properties of the bovine serum albumin complexes with acridine orange and methylene blue under the effect of millimeter range electromagnetic waves» վերնագրով հոդվածը Electromagnetic Biology and Medicine ամսագրում (Q4):

Նախատեսվում է տպագրության ներկայացնել հետևյալ վերնագրով «Особенности связывания Hoechst 33258 с бычьим и человеческим сывороточным альбумином спектральными методами» հոդվածը Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences) ամսագրում (Q4):

2. 25RG-1F172 ծածկագրով թեմայի ղեկավար՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ի.Մ. Էլոյանը նշեց, որ հաշվետու տարում իրականացվել է նախագծի պլանին համապատասխան հետազոտությունների ողջ ծավալը: Կատարվել է օդի միկրոբիոտայի նմուշառում ԵՊՀ պրոֆեսոր Լ. Ղարիբջանյանի անվան պատմության, Ավ. Իսահակյանի անվան և Մ. Սարյանի տուն թանգարաններից: Գնահատվել է նշված թանգարանների օդի աղտոտվածության աստիճանը և իրականացվել միկրոմիցետների նույնականացում, տարանջատելով պաթոգեն տեսակները: Մանրադիտակային սնկերի պահպանման և հետագա հետազոտությունների համար ստեղծվել է մաքուր կուլտուրաների բանկ: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է նաև բույսերի

հավաք, ստացվել են եթերայուղեր, իրականացվել է դրանց կենսասակտիվության գնահատում: Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է 1 թեզիս, պատրաստվում է տպագրության 1 հոդված:

3. 25RG-1F160 ծածկագրով թեմայի ղեկավար՝ ԵՊՀ «Կենսաբանություն» ԳՀԻ Մնկերի, բույսերի բազմազանության և կենսասակտիվության գնահատման լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Լ.Վ. Մարգարյանը, նշեց, որ ներկայացրած նախագծի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում օրացույցային պլանով նախատեսված բոլոր փուլերը իրականացվել են: Գիտական թեմայի շրջանակներում 2025թ-ի մայիսից մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածում մակրոմիցետների տեսակների ուսումնասիրություններ և հավաք իրականացնելու նպատակով կատարվել են թվով 7 գիտարշավներ դեպի ՀՀ Շիրակի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի անտառային տարածքներ: Նա նշեց, որ գիտարշավներից որոշներին մասնակցել է նաև արտասահմանյան գործընկեր՝ Իրվգարդ Գրեյլիուբերը: Գիտարշավների ընթացքում նշված տարացքներից հավաքվել է *Basidiomycota* և *Ascomycota* բաժիններին պատկանող սնկերի մոտ 76 նմուշ: Ուսումնասիրությունների ժամանակ հատուկ ուշադրության են արժանացել դեղաբանական հատկություններով օժտված տեսակները, որոնցից առանձնացվել է *Boletus edulis* սնկատեսակը և իրականացվել է դրա հակաօքսիդանտային ակտիվության գնահատում: Ստացված տվյալների հիման վրա նախապատրաստվել է տպագրության 1 հոդված:

4. 25RG-3C170 ծածկագրով թեմայի ղեկավար Լ. Մինասբեկյանը ներկայացրեց կատարված աշխատանքների ընթացքը, տպագրության հանձնած գիտական հոդվածները, ձեռք բերված նյութերն ու պարագաները: Նա, մասնավորապես նշեց, որ մարդու պայսիլոմավիրուսը (HPV) կապված է ամբողջ աշխարհում գրանցվող քաղցկեղի դեպքերի շուրջ 5%-ի հետ՝ ախտահարելով փոքր կոնքի տարբեր օրգանները, ինչպես նաև բերանի խոռոչը, գլուխն ու պարանոցը: Այս վիրուսի որոշ բարձր ռիսկային շտամներ առանձնանում են օնկոգեն հատկություններով և կարող են հանգեցնել բջջային կարգավորման խանգարումների: Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են աբիոտիկ գործոնների ազդեցությամբ առաջացած գենոմի էպիգենետիկ փոփոխությունները, գնահատվել է դրանց կայունությունը և գործառական նշանակությունը: Արդյունքները ցույց են տվել, որ այդ փոփոխությունների մի մասը կարող է պահպանվել և մասնակիորեն ժառանգվել նաև երկրորդ սերնդում, ինչը կարևոր է միջավայր-գենոմ փոխազդեցությունների և երկարաժամկետ կենսաբանական հետևանքների գնահատման տեսանկյունից: Նախապատրաստվում է հանձնվել տպագրության «DNA Methylation-the possibility of adaptation to abiotic environmental influence» վերնագրով հոդվածը Mutation Research-Fundamental and Molecular Mechanisms of Mutagenesis ամսագրում (Q3):

5. 25RG-1F038 ծածկագրով թեմայի ղեկավար Մ. Փարսադանյանը ներկայացրեց կատարված աշխատանքների ընթացքը, տպագրված և տպագրության հանձնած գիտական հոդվածները, ձեռք բերված նյութերն ու պարագաները: Նա նշեց, որ հաշվետու տարում ուսումնասիրվել սերոտոնինի փոխազդեցությունը ԴՆԹ-ի հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ լուծույթում ԴՆԹ-ի կոնցենտրացիայի աճին զուգընթաց սերոտոնինի ֆլուորեսցենցիայի ինտենսիվությունը նվազում է (մարվում է): Ինտենսիվության փոփոխությունների հիման վրա 298–311 Կ ջերմաստիճանային

միջակայքում հաշվարկվել են մարումների KSV (Շտեռն–Վոլմերի) հաստատունները: Պարզվել է նաև, որ սերոտոնինի կոնցենտրացիայի աճին գուրնթաց կլանման սպեկտրների ինտենսիվության աճը ավելի մեծ է ԴՆԹ-ի բացակայության, քան առկայության դեպքում: Սերոտոնին–ԴՆԹ համալիրների ֆլուորեսցենցիայի և կլանման սպեկտրների վերլուծության հիման վրա կառուցվել են ադառքցիայի իզոթերմներ և որոշվել են կապման հաստատունի (K) արժեքները, ինչպես նաև մեկ կապման կենտրոնին համապատասխանող հիմքերի զույգերի թիվը (n)-ը: Ուսումնասիրություններն իրականացվել են կլանման, դիֆերենցիալ և ֆլուորեսցենտային սպեկտրոսկոպիայի մեթոդներով: Տպագրվել է 1 հոդված՝ Մ.Ա. Парсаданян, А.П. Антонян, М.А. Шагинян, А.В. Варданян, Г.Г. Кочарян, М.Н. Гарибян, П.О. Вардеванян. К механизмам взаимодействия нейротрансмиттера серотонина с ДНК, Известия НАН Армении, серия физика, 2025, т.60, N4, с.590-598. (Q4):

6. 25RG-1F098 ծածկագրով թեմայի ղեկավար՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում մշակվել են Հայաստանում մեկուսացված *Patachlorella kessleri* MDC6524-ի և *Spirulina (Arthrospira) platensis* Pc-005-ի կենսազանգվածի ելքի խթանման մոտեցումներ: Ստացված կենսազանգվածը կիրառվել է ցինկի օքսիդի նանոմասնիկների (ZnO ՆՄ) կենսասինթեզի համար: Մշակվել է ZnO ՆՄ-ի սինթեզման նոր մեթոդ, ինչպես նաև ՆՄ-ի կենսասինթեզի ընթացքում օպտիմալացվել են ֆիզիկաքիմիական գործոնները (рН, ջերմաստիճան, և լուսավորության պայմաններ)՝ ZnO ՆՄ-ի արդյունավետության և կայունության խթանման համար: ZnO ՆՄ-ի ֆիզիկաքիմիական հատկությունները բնութագրվել են ժամանակակից մեթոդների կիրառմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է 4 թեզիս, իսկ ստացված արդյունքները ներկայացվել են 2 բանավոր և 2 պաստարային զեկույցների տեսքով «Կենսաբանական գիտություններ և բնապահպանական լուծումներ՝ հանուն կայուն զարգացման նպատակների» (Երևան, ՀՀ) և FEMS Micro 2025 (Միլան, Իտալիա) միջազգային գիտաժողովներին: Մեկ հոդված ներկայացվել է տպագրության և գտնվում է գրախոսման փուլում:

7. 25RG-1F171 ծածկագրով թեմայի ղեկավար՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ն.Հ. Զաքարյանը: Նա նշեց, որ ծրագրի շրջանակներում իրականացվել է նախագծի պլանին համապատասխան հետազոտությունների ողջ ծավալը: Մասնավորապես՝ կազմակերպվել են գիտարշավներ ՀՀ տարբեր մարզեր, կատարվել են ուսումնասիրվող բույսերի պոպուլյացիաների մոնիթորինգ, հումքի հավաք և տեսակների նույնականացում: Կատարվել է հետազոտվող տեսակների տարբեր լուծամզվածքների կենսակտիվության գնահատում: Իրականացվել է էթերայուղերի անջատում, ելքի քանակական որոշում և կենսաքիմիական կազմի բացահայտում: Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է 1 թեզիս, պատրաստվում է հրատարակման 1 գիտական աշխատանք:

8. 25RG-1F111 ծածկագրով թեմայի ղեկավար՝ կ.գ.դ. Ս.Վ. Մարությանը նշեց, որ գիտական թեման նվիրված է սթրեսային տարբեր գործոնների (իոնացնող և ոչ իոնացնող ճառագայթներ, ջերմաշոկ և այլն) ազդեցությամբ բջիջներում զարգացող օքսիդային սթրեսի հաղթահարման գործում մեղվի մայրակաթի հնարավոր դրական դերի բացահայտմանը:

Որպես հետազոտության մոդել օգտագործվում են խմորասնկային երեք շտամներ՝ *Candida guilliermondii* NP-4, *Meyerozyma guilliermondii* ATCC 6260 և *Pichia pastoris* ATCC 28485:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային խմբի կողմից շարունակվել են առաջադրանքին համապատասխան և օրացուցային պլանով նախատեսված հետազոտությունները, որոնք նվիրված են ՈւՄ-ճառագայթման ազդեցությամբ դիտարկված խմորասնկերի աճի դինամիկայի համեմատական ուսումնասիրմանը, ինչպես նաև՝ ԱԵՖագային և հակաօքսիդանտային ֆերմենտների ակտիվությունների ուսումնասիրմանը: Ձեռք են բերվել անհրաժեշտ նյութերը՝ գլիկոլիզի առանցքային ֆերմենտների ակտիվությունների փոփոխության ուսումնասիրման համար:

Ստացված տվյալների հիման վրա հաշվետու տարում 4 թեզիս ներկայացվել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կողմից կազմակերպված «Biological Sciences and Environmental Solutions for the Achievement of Sustainable Development Goals» միջազգային գիտաժողովին: Մեկ թեզիս նախապատրաստվում է ներկայացնել FEBS 2026 միջազգային կոնֆերանսին: Թեմային համապատասխան մեկ հոդված այս պահին ընդունվել է տպագրության, մեկը գտնվում է խմբագրման փուլում (ներբեռնված է), երկուսը՝ նախապատրաստվում է ներկայացնել խմբագրություն:

9. 25RG-2I009 ծածկագրով թեմայի ղեկավար՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ի.Լ. Բազուկյանը նշեց, որ հաշվետու տարում իրականացվել է ուսումնասիրվող խմբերի բուժառուներից նմուշառում: Դասական մանրէաբանական եղանակներով 5 տարբեր սննդամիջավայրերի կիրառմամբ ուսումնասիրվել է նմուշներում առկա մանրէների ընդհանուր թիվը, մանրէների բազմազանությունը: Հավաքված նմուշներից մեկուսացվել է ամբողջական ԴԼԹ և պատրաստվել մետազենոմ վերլուծություն: Ըստ Ինգա Բազուկյանի՝ Մարդու Պապիլոմա Վիրուս (ՄՊՎ) դրական բուժառուների հեշտոցային միկրոբիոմում դիտվում է խորը դիսբիոզ, նվազում է ոչ միայն քանակությունը այլ նաև տեսակային բազմազանությունը: Կարևոր է, որ ՄՊՎ դրական, բայց առանց հյուսվածքային փոփոխությունների բուժառուների մոտ նկատվում է միկրոբիոմի զրոյացում, մինչդեռ հյուսվածքային փոփոխություններով և արդեն ձևավորված քաղցկեղի դեպքում՝ քանակությունը բարձրանում է և տեղի է ունենում տեսակային փոփոխություն: Միայն ստուգիչ առողջ բուժառուների նմուշներից մեկուսացվել են մոտավորապես 41 կաթնաթթվային բակտերիաների (ԿԹԲ) շտամներ, որոնց հակաբակտերիական և հակախմորասնկային ակտիվություններն են ուսումնասիրվել: Բացի այդ նախորդ տարիներին հեշտոցային նմուշներից մեկուսացված ԿԹԲ նույնականացվել են MALDI-TOF սպեկտրո-լուսաչափման եղանակով: Ուսումնասիրվել է այս շտամների ադիեզիայի ունակությունը: Հաշվետու տարում խմբի երիտասարդ գիտնականները մասնակցել են FEBS և FEMS միջազգային կոնֆերանսներին, ներկայացնելով պաստառային զեկույցներ, ինչպես նաև ԵՊՀ-ում տեղի ունեցած «BSES-SDGs» միջազգային կոնֆերանսին: Ընդհանուր թվով տպագրվել է 7 թեզիս:

10. 25RG-1F199 ծածկագրով թեմայի ղեկավար՝ կենդանաբանության ամբիոնի դոցենտ կ.գ.թ. Գեորգի Յուրիի Պապովը նշեց, որ որ հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում իրականացվել են նախապատրաստական, դաշտային և լաբորատոր համալիր աշխատանքներ:

2025թ-ի սկզբին Շրջակա միջավայրի նախարարությունից ստացվել է կենդանիների որս/բռնում իրականացման համար թույլտվություն (թիվ 3/29.7/2593): Կատարվել է դաշտային աշխատանքների մանրամասն պլանավորում, նույնականացվել և քարտեզագրվել են թիրախային տարածքները: 2025 թ. մայիսին ծրագրի խորհրդատու Քշիշտոֆ Տուրլեյսկին այցելել է Հայաստան և մասնակցել խմբի հետ իրականացվող դաշտային աշխատանքներին: Վերլուծվել է կենդանաբանության ամբիոնում առկա սրնչականմանների հավաքածուն: 2025թ.-ին իրականացված դաշտային հետազոտությունների արդյունքում 8 մարզերից բռնվել և նմուշառվել է 20 կենդանի, որոնցից ներկայումս իրականացվում են ԴՆԹ-ի անջատում և մակարոնաբանական հետազոտություններ: Հավաքածուներից և բռնված կենդանիներից 49 նմուշ առանձնացվել և ուղարկվել է արտասահմանյան գործընկերներին՝ սեկվենա-վորման: Ստացված հաջորդականությունները գտնվում են վերլուծության փուլում: Գրականության հավաքագրման և վերլուծության արդյունքները ներկայացվել են Հունաստանի Պատրաս քաղաքում կայացած Կաթնասունների ուսումնասիրման 9-րդ կոնգրեսում (ECM9)՝ պաստառային զեկուցման ձևաչափով: Այժմ պատրաստվում է հոդված առկա տվյալների վերաբերյալ:

11. 25RG-1F181 ծածկագրով թեմայի ղեկավար՝ մարդու ու կենդանիների մորֆոլոգիայի ու ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ՝ Ա.Ֆ. Կարապետյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են կենդանիների մոդելներում նյարդային հյուսվածքի կառուցվածքային փոփոխությունների համալիր հյուսվածաբանական, հիստոքիմիական և մորֆոմետրիկ հետազոտություններ: Ստացված արդյունքները թույլ են տվել բնութագրել ներդրող գեներատիվ փոփոխությունների արտահայտվածությունը և գնահատել փորձարկված դեղամիջոցի ներդրող ազդեցությունը՝ ցույց տալով հյուսվածքային կառուցվածքի հարաբերական պահպանման և բջջային վնասման նվազման միտում: Ստացված արդյունքների հիման վրա պատրաստվել է գիտական հոդված, որը գտնվում է միջազգային գրախոսվող պարբերականում գրախոսման փուլում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոհիշյալ բոլոր թեմաների հետագա ֆինանսավորումը:

3. ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Նպատակային ծրագրեր-2027» (Target 2027) մրցույթին կենսաբանության ֆակուլտետի կողմից ներկայացված հայտերի երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

- «Կենսաբանություն» ԳՀԻ Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կարեն Արամայիսի Ղազարյանը;
- Կենսաբանություն» ԳՀԻ Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատող Աբիլշեկ Սինխը;

- «Կենսաբանություն» ԳՀԻ Կենդանիների էվոլյուցիայի և զոոնոգ հիվանդությունների ուսումնասիրության լաբորատորիայի ղեկավար, կենդանաբանության ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Մարինե Սեմյոնի Առաքելյանը;
- «Կենսաբանություն» ԳՀԻ-ի Սնկերի, բույսերի բազմազանության և կենսաակտիվության գնահատման լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Լուսինե Մարգարյանը:

Կարեն Ղազարյանի կողմից ներկայացվեց «Սյունիքի, Վայոց ձորի և Լոռու մարզերի հողերում որոշ հետքային տարրերի ֆոնային և հիմնագծային պարունակությունների գիտամեթոդական հիմնավորում և որոշում» նախագիծը:

Նա նշեց, որ հողը կարևոր դեր է խաղում հետքային տարրերի կենսատրոֆիկական շրջանառության մեջ՝ ազդելով էկոհամակարգերի գործունեության, սննդի որակի և մարդու առողջության վրա: Հողերում որոշ միկրոտարրերի ֆոնային և հիմնագծային պարունակությունների գիտամեթոդական հիմնավորումը և որոշումը հիմնարար նշանակություն ունի հողի որակի գնահատման և հողօգտագործման կայուն կառավարման համար: Հայաստանի Սյունիքի, Լոռու և Վայոց ձորի մարզերը ներկայացնում են երկրաքիմիական առումով բազմազան տարածքներ, որոնք ձևավորվել են տարբեր երկրաբանական կառուցվածքների և հողակլիմայական պայմանների ազդեցությամբ: Վերոնշյալից էլնելով՝ նախագծի հիմնական նպատակն է հանդիսանում նշված մարզերի հողերում որոշ միկրոտարրերի ֆոնային և հիմնագծային պարունակությունների գիտամեթոդական հիմնավորումը և որոշումը: Սպասվող արդյունքները ներառում են որոշ միկրոտարրերի ֆոնային և հիմնագծային արժեքների սահմանում, տարածական բաշխման քարտեզների կազմում և մեթոդաբանական շրջանակի մշակում՝ շրջակա միջավայրի մոնիթորինգի և հողերի պահպանության քաղաքականության աջակցման համար:

Արհիշեկ Մինխի կողմից ներկայացվեց «Հողերի պիտանելիության գնահատում և կենսաածխի վրա հիմնված բարելավում Երևանի տարբեր միկրոկլիմայական գոտիներում՝ կայուն կանաչ տարածքների զարգացման և քաղաքային թափոնների շրջանաձև կառավարման համար» նախագիծը:

Նա նշեց, որ Երևանի քաղաքային հողերը շարունակաբար ենթարկվում են աղակալման, ծանր մետաղներով աղտոտման, սննդատարրերի նվազման և օդի աղտոտման ազդեցությանը, ինչը բացասաբար է անդրադառնում բույսերի աճի և էկոհամակարգերի կայունության վրա: Ծրագիրը նպատակն է համակողմանիորեն գնահատել հողի ֆիզիկաքիմիական և կենսաբանական հատկությունները, ներառյալ pH-ը, էլեկտրահաղորդականությունը, հողի օրգանական ածխածնի պարունակությունը, սննդատարրերի պարունակությունը, ծանր մետաղների կոնցենտրացիաները և ֆերմենտային ակտիվությունը՝ քաղաքային տարբեր տարածքներում: Ծրագրի շրջանակում քաղաքային կանաչ թափոնները վերահսկվող պիրոլիզի միջոցով կվերամշակվեն բարձրորակ կենսաածխի և կենսածուխ-կոմպոստ խառնուրդների՝ նպատակելով թափոնների կայուն կառավարմանը և աղբավայրերի ծանրաբեռնվածության նվազեցմանը: Դաշտային և վեգետացիոն փորձերով կգնահատվեն հավելանյութերի արդյունավետությունը նատրիումի և ծանր մետաղների կապման, հողի կառուցվածքի և մանրէաբանական ակտիվության բարելավման, ինչպես նաև

բույսերի աճի խթանման գործում: GIS-հիմքով տարածական քարտեզագրմամբ կբացահայտվեն հողի դեգրադացիայի բարձր ռիսկային գոտիները և վերականգնման մեթոդների արդյունավետությունը:

Մարինե Առաքելյանի կողմից ներկայացվեց «Հայաստանի կենդանիների տեսակների որոշման և հաշվառման համակարգի արդիականացում և նորարարական լուծումների ներդրում» նախագիծը:

Նա նշեց, որ նախագիծը առաջարկում է ստեղծել արհեստական բանականության օգտագործմամբ և բարկոդինգի վրա հիմնված ինտեգրված տեսակների որոշման համակարգ՝ միավորելով առկա հավաքածուները, թվային պատկերներն ու գենետիկական տվյալները: Այն կներառի կենդանատեսակների տվյալների գնահատում, նպատակային դաշտային հետազոտություններ՝ տաքսոնոմիական բացերը լրացնելու համար, ինչպես նաև տեսակների նույնականացման համար կներդրվի խորը նեյրոնային ուսուցման համակարգ: Այն աջակցված կլինի ԴՆԹ-շտրիխ կոդավորմամբ՝ հուսալի արդյունք ապահովելու համար: Լայքնիցի կենսաբազմազանության վերլուծության ինստիտուտի օգնությամբ իրականացվող նախագիծը կստեղծի կենդանիների ազգային հավաքածուի նախատիպ, տեսակների արագ նույնականացման կենտրոն և բջջային հավելված՝ վնասատուները ճանաչելու համար: Զուգահեռ իրականացվող հետազոտական բաղադրիչներն ու նոր սերնդի մասնագետների պատրաստումը կապահովեն միջազգային չափանիշներին համապատասխան գիտական մոնիթորինգ, ինչը կդարձնի Հայաստանը որպես բարձր տեխնոլոգիական մոնիթորինգի տարածաշրջանային կենտրոն:

Լուսինե Մարգարյանի կողմից ներկայացվեց «Հայաստանի Հանրապետության սնկերի կարմիր գրքի վերանայում» նախագիծը:

Նա նշեց, որ նախագծի նպատակն է իրականացնել Հայաստանի Հանրապետության 12 ֆլորիստական շրջանների մակրոմիցետների բազմազանության կարգաբանական, էկոլոգիական բազմակողմանի ուսումնասիրություններ, վտանգված և կարմիրգրքային սնկատեսակների ԴՆԹ բարկոդավորում, սնկերի տեսակային պատկանելիության որոշում և լոկալ պոպուլյացիաների ֆիլոգենետիկական կապերի հաստատում: Միջազգային չափորոշիչներին համապատասխան կիրականացվի դրանց պահպանության վիճակի գիտական վերանայում և վերագնահատում: Առաջին անգամ կստեղծվեն կարմիրգրքային և պոտենցիալ նոր սնկատեսակների GIS քարտեզներ: Նախատեսվում է ստեղծել վտանգված սնկատեսակների թվայնացված ազգային տվյալների բազա, կարմիրգրքային և նոր տեսակների մաքուր կուլտուրաների և լիոֆիլիզացված նմուշների բանկ, ինչպես նաև մշակել գիտականորեն հիմնավորված առաջարկություններ ՀՀ Կարմիր գրքի նոր հրատարակության համար: Առաջարկվող նախագիծը համապատասխանում է ՀՀ նպատակային ծրագրերին:

Աննա Փոլադյանի կողմից ներկայացվեց «ՀՀ-ում հասանելի օրգանական թափոնների վերամշակում՝ շրջանաձև տնտեսության համատեքստում մանրէային սննդամիջավայրերի ստացման նորարարական մոտեցումներով» նախագիծը:

Նա նշեց, որ ծրագրի նպատակն է մշակել օրգանական թափոնների կենսաքիմիական և մանրէաբանական արդյունավետ փոխակերպման տեխնոլոգիական լուծումներ՝ ուղղված

այլընտրանքային, էկոլոգիապես մաքուր էներգիայի ստացմանը, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանը, թափոնների կառավարման համակարգի կատարելագործմանը և շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրմանը: Սկսած 2018 թվականից գիտական խումբն ունի փորձ և նշանակալի ձեռքբերումներ օրգանական թափոնների վերամշակման, մանրէային կենսազանգվածի և կենսաէներգիայի ստացման ոլորտներում, որոնց վերաբերյալ հրապարակվել են տասնյակ գիտական հոդվածներ միջազգային հեղինակավոր ամսագրերում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել Կարեն Արամայիսի Ղազարյանի «Սյունիքի, Վայոց ձորի և Լոռու մարզերի հողերում որոշ հետքային տարրերի ֆոնային և հիմնագծային պարունակությունների գիտամեթոդական հիմնավորում և որոշում», Աբիլշեկ Սինխի «Հողերի պիտանելիության գնահատում և կենսաածխի վրա հիմնված բարելավում Երևանի տարբեր միկրոկլիմայական գոտիներում՝ կայուն կանաչ տարածքների զարգացման և քաղաքային թափոնների շրջանաձև կառավարման համար», Մարինե Սեմյոնի Առաքելյանի «Հայաստանի կենդանիների տեսակների որոշման և հաշվառման համակարգի արդիականացում և նորարարական լուծումների ներդրում», Լուսինե Մարգարյանի «Հայաստանի Հանրապետության սնկերի կարմիր գրքի վերանայում», Աննա Փոլադյանի «ՀՀ-ում հասանելի օրգանական թափոնների վերամշակում՝ շրջանաձև տնտեսության համատեքստում մանրէային սննդամիջավայրերի ստացման նորարարական մոտեցումներով» նախագծերը մրցույթին մասնակցելու համար:

4. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի ֆարմաէխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի ավագ լաբորանտ, Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀ կենտրոնի բժշկակենսաբանական սրբինինգի խմբի ավագ լաբորանտ, հայցորդ Մելանյա Սամվելի Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կարեն Արամայիսի Ղազարյանը, ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի ֆարմաէխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀ կենտրոնի բժշկակենսաբանական սրբինինգի խմբի ղեկավար, կ.գ.թ., դոցենտ Անահիտ Մխիթարի Հովհաննիսյանը, հայցորդ Մելանյա Սամվելի Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Մելանյա Սամվելի Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեման «Սինթետիկ ծագման միացությունների հակամանրէային և հակավիրուսային հատկությունների ուսումնասիրում»՝ Գ.00.07 «Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ, (բնագավառ՝ կենսաբանական գիտություններ), գիտական ղեկավար նշանակել ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի ֆարմաէխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀ կենտրոնի բժշկակենսաբանական սրբինինգի խմբի ղեկավար, կ.գ.թ., դոցենտ Անահիտ Մխիթարի Հովհաննիսյանին:

5. **ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի նախկին հայցորդ Արմինե Երվանդի Պարոնիկյանի գիտական ղեկավարի հաստատման հարցը:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ պրոֆ., կ.գ.դ. Ս.Գ. Նանագյուլյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ գիտական ղեկավար նշանակել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ի. Վ. Շահազիզյանին:

6. **ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների ներկայացման հարցը:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Նա առաջարկեց շարունակել հատկացնել *Նորայր Սիսակյանի* անվան կրթաթոշակը՝ «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանող Գայանե Ռուդիկի Նազարյանին; *Լևոն Օրբելու* անվան կրթաթոշակը՝ կենսաբանության ֆակուլտետի «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրիատի կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանող Դիանա Արմենի Դարբինյանին, իսկ *Արմեն Թոչունյանի* անվան կրթաթոշակը՝ «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրիատի կրթական ծրագրի III կուրսի ուսանող Մարի Արթուրի Գասպարյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ուսանողների բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին, շարունակել հատկացնել՝

- *Լևոն Օրբելու* անվան կրթաթոշակը՝ կենսաբանության ֆակուլտետի «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրիատի կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանող **Դիանա Արմենի Դարբինյանին:**
- *Նորայր Սիսակյանի* անվան կրթաթոշակը՝ կենսաբանության ֆակուլտետի «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանող **Գայանե Ռուդիկի Նազարյանին:**
- *Արմեն Թոչունյանի* անվան կրթաթոշակը՝ կենսաբանության ֆակուլտետի «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» բակալավրիատի կրթական ծրագրի III կուրսի ուսանող **Մարի Արթուրի Գասպարյանին:**

7. Գիտխորհրդի ժամանակ բացի օրակարգային հարցերից քննարկվեցին նաև որոշ ընթացիկ հարցեր, ուղղված կրթության որակի և բովանդակության բարելավմանն ու արդիականացմանը: Անդրադառնալով ինչպես ուսուցման որակն ապահովող

գործառույթներին, այնպես էլ ուսանողների մոտ գործնական հմտությունների, վերլուծական և հետազոտական կարողությունների զարգացմանը, կարևորվեց ուսանողների դասերին հաճախելիության և կրթական պրոցեսին ակտիվ մասնակցության հարցը, որին պետք է հետևողական լինեն ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ

Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.դ., դոցենտ

Մ.Ա. Փարսադանյան

